

Թիւ 1235  
Մայիս 2, 1960

Մեծայարգ  
Տիար Սեդրակ Ատուրեան  
Ատենադպիր Միսական Խորհուրդի  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Թորանթօ.

Յարգելի Պրն. Ատուրեան,

Ստացած ենք 1960 Ապրիլ 20 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով  
կը տեղեկացնէք թէ Հոգեշնորհ Տ. Վազգէն Վրդ. Թաղոյեանի նախագահու-  
թեամբ ֆետրուար 21ին գումարուած ծխական ժողովին մէջ ընտրուած են  
Միսական Խորհուրդի նոր անդամները, եւ ներկայացնելով ընտրութեան  
արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ վերոյիշեալ անձերը ըստ օրինի ընտրու-  
ուած են եւ իբրեւ եկեղեցւոյդ պարտաճանաչ անդամներ կը վայելեն  
ընտրողներու վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրու-  
թիւնը հետեւեալ կարգով.-

- Տիարք՝ Տիրան Փափազեան
- Պարգեւ Խոճաճեան
- Գեղամ Պարոնեան
- Վահէ Ունճեան
- Օրդ.՝ Մերի Փղատեան

Կ'օրհնենք նորընտիր անդամները եւ կը մաղթենք պատուարժան  
Միսական Խորհուրդիդ համերաշխ եւ բեղմնաւոր գործունէութիւն ի պայ-  
ծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եւ յօգուտ մեր սիրեցեալ  
ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
եւ օրհնութեամբ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Այսու ղիտել կու տանք թէ ձեր ծխական ժողովը գումարուած  
է ֆետրուար 21ին, մինչդեռ ձեր տեղեկագիրը կը կրէ Ապրիլ 20 թուա-  
կանը: Կը յանձնարարենք որ յետ այսօրիկ ձեր տեղեկագիրը ժամանակին  
Առաջնորդարան ղրկէք: